

Հասցեագրում 65 Բաժնի



*Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի*

*աշխատանքային տարեկան ծրագիր*

*ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ*

*V<sup>Բ</sup> դասարան*

*Դասղեկ՝ Տաթևիկ Սուրադյան*

*Ստորագրի*

# Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)** V<sup>բ</sup> դասարանը ձևավորվել 2023-2024 ուստարում: Դասարանում սովորում են 24 աշակերտներ՝ 11 տղա, 13 աղջիկ: Դասարանում կա բավական լավ կորիզ: Ուստարվա ընթացքում կատարվելու է հետևողական աշխատանք ամուր կուլեկտիվ ձևավորելու, աշակերտների տարրական դպրոցից հետո միջին օղակի ծանրաբեռնվածությունը հնարավորինս հեշտությամբ հաղթահարելու համար:

2. **Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.**

Ուսումնադաստիարակչական աշխատանքները տարվա ընթացքում ուղղորդված են լինելու ուսման որակի բարձրացմանը, ուսման առաջադիմության ապահովմանը և համակողմանի զարգացած մարդու ձևավորմանը: Դաստիարակչական աշխատանքներ տանել դասարանում սովորողների շրջանում՝ ակտիվորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ: Կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանը նպաստող միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, հետևել տնային աշխատանքների կատարմանը, տնօրինությանը ներկայացնել հաճախումների, առաջադիմության և վարքի մասին տեղեկություններ:

3. **Հայեցի դաստիարակչություն.** Մշտապես կարևորվել է աշակերտների հայեցի դաստիարակչությունը: Փորձել աշակերտներին մոտ պահել ազգային երգ ու պարին, հաճախակի ունկնդրել ազգագրական երգեր, ծանոթացնել ազգայինը կարևորող հեռուստահաղորդումներին ու մրցույթներին:

3.1 **Հոգևոր դաստիարակչություն.** Դաստիարակչական աշխատանքները պետք է կազմակերպվեն այնպես, որ աշակերտները բացի առարկայական գիտելիքներից զինվեն նաև հոգևոր գիտելիքներով: Աշակերտի մոտ ձևավորել համամարդկային և քրիստոնեական արժեքներ:

3.2 **Գեղագիտական դաստիարակչություն.**

Ձևավորել աշակերտի մոտ գեղագիտական ճաշակ: Կազմակերպել այցելություններ թանգարան, պատկերասրահ, թատրոն, որպեսզի աշակերտը տեսնի և գնահատի գեղեցիկն ու բարին և փորձի կյանքում առաջնորդվել դրանցով:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակչություն.**

Ռազմահայրենասիրական դաստիարակչությունը մեր օրերում շատ կարևոր է: Հայրենասիրական երգերի միջոցով, մերօրյա հերոսների օրինակով դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն.** Հոգ տանել աշակերտի առողջության մասին: Կարևորել սպորտի դերը մեր կյանքում և ֆիզիկական առողջության պահպանման գործում: Խրախուսել աշակերտների մասնակցությունը տարբեր սպորտաձևերում:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն.**

Խթանել աշխատանքային կարողությունները, ձևավորել հմտություններ: Աշակերտներին ակտիվ մասնակից դարձնել դպրոցամերձ տարածքների մաքրման աշխատանքներին: Դասասենյակներում հետևել մաքրության պահպանմանը:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն.**

Ձևավորել աշակերտի մեջ սերը դեպի բնությունը: Ձևավորել հոգատար վերաբերմունք բնության հանդեպ: Մաքուր պահել շրջակա միջավայրը, սեփական վարքագծով կանխել բնապահպանական աղետները:

**3.7 Դպրոց-ընտանիքկապը.**

Կրթադաստիարակչական բոլոր աշխատանքները արդյունավետ կլինեն, եթե գործի դպրոց ընտանիքկապը: Անցկացնել ծնողական ժողովներ, ունենալ զրույցներ ծնող ներքին հետ:

**3.8 Անձնական տվյալների գաղտնիություն**

Հաշվի առնելով ժամանակակից հեռահաղորդակցողիների առկայությունը, երեխաների հետ անցկացնել զրույց դրանց վտանգների, անձնական տվյալների գաղտնիության մասին.

**Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը**

Ուս Շ.	Ուսումնակադաստ. աշխատ. բովանդակությունը	Կ. Ժ.	կատարողներ
1	Կազմակերպչական հարցեր, ծանոթացում վարժարանի տարածքին:		
2	Ընտրել դասարանի ավագ:		
3	Մի-փոքր մեր մասին:		
4	Այցելություն եկեղեցի, մոմավառություն:		
6	Պահպանենք մեր և մեր հարազատների առողջությունը: Հակահամաճարակային պայմաններում ուսումնական գործընթացում առկա դժվարությունները, դրանց հաղթահարումը:		
7	Աշակերտների իրավունքներ ու պարտականություններ:		
8	Այցելություն Շիրազի տուն-թանգարան:		
9	Անտուան Էքզյուպերիի աղոթքը		

11	Խոսքի ուժն ու զորությունը:		
12	Անվտանգ երթևեկություն, կանոնների պահպանում:		
13	<<Հրաշագործը» - թատրոն		
14	Սովորենք առակներով, արևելյան առակների էկրանավորումներ:		
15	Կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերլուծություն:		
16	Հին և նոր տոմարով Նոր տարի:		
17	Ուզում եմ ունենալ ապահով հայրենիք:		
18	Եթե ես կարողանայի:		
19	Հեքիաթ և իրականություն: Հեքիաթի որ հերոսն է ինձ դուր գալիս:		
20	Ինչ որ ցանես, այն կհնձես:		
21	Անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն:		
22	Գրքեր նվիրենք միմյանց:		
23	Ի՞նչ մասնագիտություններ եմ սիրում, ինչու՞:		
24	Հայ անվանի գիտնականները:		
25	Մայրության և գեղեցկության միամսյակ:		
26	<<Մեր մանկության մոլորակը>> դասարանական միջոցառում:		
27	Ինչպե՞ս լինել ակտիվ քաղաքացի:		
28	Ինչպե՞ս վարել առողջ ապրելակերպ:		
29	Իմ մանկական պատկերացումները համաշխարհային հիմնախնդիրների վերաբերյալ:		
30	Վատ և լավ սովորություններ:		
31	Մպորտը մեր կյանքում:		
32	Ժպիտը մեր կյանքում:		
33	Ընթացիկ հարցեր		
34	Իմ ձեռքբերումները այս ուստարում:		



ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

անց. ժ.	աշ. անուն, ազգ., հայրանուն	աշխատանքների համառոտ բովանդակությունը	աշխատանքների արդյունքները	Լրաց. լեղեկ.
			.	

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԸ

Օրը, ամիսը, տարին	Առարկան և դաս. Ուսուցիչը	Դասի թեման	նպատակը
			.

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անց. Օրը	Քննարկվող օրակարգի հարցերը	Ժող. Համառոտորով	Ծանոթ.
04.09.2003թ.	1. Ծանոթացում ծնողների հետ: 2. Ծնող կոմիտեի ձևավորում: 3. Կազմակերպչական հարցեր:		

